ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ (1918-1920 ԹԹ.)

ՎԻՐԱԲՅԱՆ Վ. Հ.

*1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, որի անդրանիկ կառավարության լիազորություններն ստանձնած Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն իրեն հռչակեց հայկական զավառների գերագույն կառավարիչ և իր առաջնակարգ խնդիրներից մեկը համարեց պետական կառույցների ստեղծումը: Հնարավոր չէ պատկերացնել մի պետություն, որը զուրկ լինի ազգային-պետական անվտանգության համակարգից և նրա բաղկացուցիչ մաս կազմող հետախուզական ու հակահետախուզական ծառայություններից: ՀՀ հետախուզության կարկառուն դեմքերից մեկը՝ **Տիգրան Դեվոյանցը**[1], գրել է. «**Հետախուզութիւնը պետութեան աչքն ու ականջն է**: Հետախուզական բաժանմունքը խաղաղ ժամանակ կը պատրաստի պատերազմի համար եւ անդադար կուսումնասիրէ թշնամիի ուժերու դասաւորութիւնը, զօրքերու տեսակներն ու որակը, ամրութիւնները, հաղորդակցութեանց միջոցները, կապը, մթերքներն ու ռազմամթերքի պահեստները, բերքը, ժողովուրդի տնտեսական եւ առողջապահական վիճակը, ազգութիւններու փոխյարաբերութիւնը եւ անոնց վերաբերմունքը դէպի պետութիւնը, պահեստի զորամասերը, հրամանատարներու բնաւորութիւնը, նոր շինուող ճանապարհները, օդակայանները: Մի խօսքով, հմուտ հետախոյզը իր գործելակերպի եւ գործունէութեան մէջ որեւէ սահման չունի»*[2]*:*

Հենց այդ նկատառումներից ելնելով՝ ՀՀ կառավարությունը 1918 թ. երկրորդ կեսին ձեռնամուխ եղավ պետական-ազգային անվտանգության համակարգի մարմինների ձևավորմանը՝ որոշակի գումարներ հատկացնելով իր չափազանց աղքատիկ բյուջեից: Եվ այսպես. 1918 թ. օգոստոսի 13-ին ՀՀ Նախարարների խորհուրդը որոշեց 20-հազարական ռուբլի հատկացնել հետախուզության և հակահետախուզության համար[3]*: Ակնհայտ է, որ հետախուզությանը հատկացվող գումարները չափազանց փոքր էին: Ռազմական գերատեսչության գծով հրամանագրի*

---

[1] **Դեվոյանց Տիգրան Թադևոսի** *[«1890 թ.», Երևան - 02. 09. 1965 թ., Բելգիա]- Սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային-ճարտարագիտական ֆակուլտետում, մանկավարժ: Հայտնի է* **Դևո, Тигр, Дево** *և այլ ծածկանուններով. - տե՛ս* **Հովակիմյան Բ. Մ.,** *Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005, էջ 596: Տե՛ս նաև Հորիզոն (Թիֆլիս), 1914, N 230, 233, Армянский вестник (Москва), 1916, N 33, с. 24, Кавказское слово [Тифлис], 1914, N 28-30, 34-36, 1918, N 117:*

[2] **Դէլոյեանց S.**, *Հետախոյզի մը յուշերը (ՎԷՄ (Փարիզ), 1938, N 3, էջ 59):*

[3] *ՀԱԱ, Ֆ.Պ - 201, գ. 1, գ. 484, թ. 9, Ֆ.Պ- 202, գ. 1, գ. 13, թ. 12, Ֆ.Պ- 204, գ. 1, գ. 216, թ. 1:*

համաձայն՝ 1919 թ. ապրիլի 14-ին ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբին առընթեր ստեղծվեց Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը, որի կազմակերպիչներն էին գնդապետ Ալ. Կ. Շնեուրը (Սարդարապատի ճակատամարտի հերոս) և Մ. Զինկևիչը, իսկ պետերից՝ կապիտան Վ. Գ. Մուրադյանը (անկուսակցական), որը 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը ղեկավարել է ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը, 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը՝ կապիտան Տ. Դեվոյանցը (ՀՅԴ անդամ, Դրոյի դասընկեր), 1920 թ. հուլիսից մինչև ՀՀ խորհրդայնացումը (դեկտեմբերի 2-ը)՝ պորուչիկ Մ. Ն. Դոդոխյանը[4]:

Հետախուզական բաժնի համակարգում աշխատեցին նաև պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև՝ հետախուզության մշտական գործակալ Վրաստանում, հայ մեծ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի որդին), ենթասպա Արշակ Սարգսյանը (մշտական գործակալ Բաքվում), Գրիգորի Երամովը (դիտորդ Վրաստանում), պոդպորուչիկ Սիմոն Հովսեփյանը (գրասենյակի և Ղամարլուում հետախուզության վարիչ): Հակահետախուզության գործունեությունը ղեկավարում էր Ռումինական ռազմաճակատի զորակայանին կից Սնծովյան նավատորմի գլխավոր հրամանատարի շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժնի նախկին պետ, ծովակալ Կոլչակին քաջածանոթ, ծովակալության գծով պորուչիկ Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը՝ Հովհան Խան-Կոտուրսկին[5]:

Հայկական հետախուզությունը գործուն ուժ դարձավ Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Թուրքիայում: Ռազմական գերատեսչության գծով 1919 թ. ապրիլի 14-ի հրամանագրով հետախուզական բաժանմունքի խնդիրներից էին հակառակորդի մասին տեղեկատվության հավաքելը և ժամանակին զորքերին հա-ղորդելը, բրիգադների շտաբների հետախուզական աշխատանքը և լրտեսության դեմ պայքար կազմակերպելը:

Հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկու կողմից Գլխավոր շտաբի պետին 1919 թ. մայիսի 2-ի, ինչպես նաև Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար փոխգնդապետ Ա. Շնեուրի 1919 թ. մայիսի 21-ի զեկուցագրերում՝ ուղղված Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Գ. Արարատյանին, առաջարկվեցին սկզբունքային ռազմաքաղաքական մոտեցումներ հետախուզական գործի կազմակերպման և Արտաքին գործերի նախարա-

[4] ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1,գ. 132, թթ. 54 - 55:

[5] ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 29ա, թ. 215, Ֆ.Կ - 91, ց. 3, գ. 3594, թթ. 2 - 20, ՎԷՄ (Փարիզ), 1938, յունվար-մայիս, N 2, էջ 49:

ության, նրա ներկայացուցչությունների (այդ թվում՝ դեսպանատներ, հյուպատոսարաններ) և հետախուզական ծառայությունների միջև սերտ համագործակցություն հաստատելու, արտասահմանում գործող հայ հետախույզներին աջակցելու ու օգնելու նկատմամբ[6]: ՀՀ Նախարարների խորհուրդը 1920 թ. ապրիլի 8-ին, լսելով Զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման մասին, որոշում կայացրեց այդ գործունեությունը ենթարկել ՀՀ դեսպանների հսկողությանը[7]:

Այդ տարիներին Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը ձեռնարկեց նաև հեռահար մի շարք քայլեր հետախուզության բնագավառի համար անհրաժեշտ կադրերի պատրաստման ուղղությամբ, որոնք պետք է տիրապետեին ֆրանսերենին, անգլերենին, թուրքերենին[8]: Քայլեր արվեցին Ֆրանսիայում ռազմական և հետախուզական կադրերի ուսուցման դասընթացներ կազմակերպել, սակայն վերահաս թուրք-հայկական աղետալի պատերազմը ձախողեց այդ պլանների իրագործումը:

Փորձելով կայանալ՝ ՀՀ հետախուզական ծառայությունը բացահայտեց Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության մեքենայությունները: Տ. Դեվոյանցը փաստում է. «Երեւանում գտնուող Ատերբէյճանի դիւանագիտական միսիան ոչ միայն անսովոր արագութեամբ յայտնում էր Թիֆլիս եւ Բագու Հայաստանի զօրքերի դասաւորութեան եւ զօրքերի ու ռազմամթերքի փոխադրութեանց մասին, այլեւ իր ձեռքի տակ ունեցած էր Հայաստանի գաղտնի հրամանագրերն ու հրահանգները: Նրանց բազմաթիւ լրտեսները ամէն օր անարգել կերպով Երեւանի թա-թարական թաղի ետեւի կողմից անցնում էին Թոխմախան Գէօլը եւ նրա մոտից գնում Շարուր-Նախիջեւան, Բէյուկ - Վէդի, Զանգիբա-սար՝ Երեւանից փոխադրելով այնտեղ ռազմամթերք, հրահանգներ, լուրեր, ուտեստեղէն: Եթէ Ատերբէյճանի դիւանագիտական ներկայացուցիչը չէզոք գօտիի վրայ չթալանուէր «աւազակների» կողմից, Թիֆլիսի վրայով Բագուից ուղարկուած գումարով միայն Շարուր-Նախիջեւանի շրջանի թաթարական բանակի թիւը պէտք է հասնէր 10000-ի. նոյն համեմատութեամբ պէտք է աւելանար կռուող թաթարների թիւը Բէյուկ-Վէդիի, Զանգիբասարի եւ այլ շրջանների մէջ»[9]:

ՀՀ հետախուզական ծառայությունները բացահայտեցին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչներ Մամեդ խան Թեքինսկու, Հախվերդովի,

---

[6] *ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, թ. 24:*

[7] *ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 489, թ. 62, Ֆ.Պ- 278, ց. 1, գ. 11, թ. 16:*

[8] *ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 104, թ. 61:*

[9] **Դէոյեանց Տ.**, *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1945, N 4 (249), էջ 88):*

Մակինսկու, միսիայի քարտուղար և երբեմն հավատարմատարներին փոխարինող Միր Բաբանի գործունեությունը և գաղտնագերծեցին Բաքու ուղարկված մի շարք ծածկագրված հեռագրեր: Հետախուզությունը բացահայտեց, որ Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության քարտուղար Միր Բաբանի կողմից Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին դեռևս 1919 թ. սեպտեմբերի 18-ին և սեպտեմբերի 21-ին ուղարկված հեռագրերում կան լրտեսական մանրամասներ: Առաջին հեռագրում Միր Բաբանը արտաքին գործերի նախարարին տեղեկացնում էր, թե Բաքվի հայկական գործակալը (Արշակ Սարգիսյան՝ ՀՀ հետախուզության ռեզիդենտ-ներկայացուցիչը Բաքվում) հայկական հակահետախուզության պետին հաղորդել է, որ հատուկ հանձնարարությունների գծով սպա կապիտան Քասումբեկովը և կոռնետ Ալի խան Մակինսկին Ադրբեջանի հակահետախուզությունում հաշվառման մեջ են, որ հայկական հետախուզական ծառայությունները բացահայտել են նրանց գործունեությունը Երևանում՝ խնդրելով վերջիններիս ընդգրկել Ադրբեջանի բանակի կազմում[10]: Սեպտեմբերի 21-ի հեռագրի գաղտնագերծումից ակնհայտ դարձավ, որ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը տեղեկություններ էր հաղորդում, որ Հայաստանում ընթանում է 19-ից 30 տարեկանների զորահավաք[11]:

1920 թ. մայիսի կեսերին ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվական բաժինը[12] ՀՅԴ Բյուրոյին, ՀՀ արդարադատության, Ներքին գործերի և Զինվորական նախարարություններին, բանակի սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանին, խորհրդարանի նախագահին, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին, Բաթումում ընդհանուր հյուպատոսին, Հայաստանի պատվիրակությանը Փարիզում, Հայաստանի Հանրապետության դեսպաններին Իտալիայում, Լոնդոնում, Վաշինգտոնում ներկայացրեց մի հեռագիր-հաղորդագրություն այն մասին, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հրապարակել է Երևանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների ու նրանց գործակալների միջև փոխանակված ողջ գաղտնի գրագրությունը, այդ թվում՝ անգլերեն, որը վերաբերում է Ադրբեջանի կառավարության և նրա ներկայացուցչի կատարած հակապետական, հակահայկական գործունեությանը՝ ուղղված Զանգիբասարում ապստամբական դրության սրմանը, ՀՀ իշխանությունների

---

[10] *ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 73 (71), թ. 155:*

[11] *Նույն տեղում, թ. 156:*

[12] *Այդ բաժինն ստեղծվել է 1919 թ. ապրիլի սկզբին Արտաքին գործերի նախարարությանը կից՝ որպես Տեղեկատվական բյուրո, որը պետք է ծառայեր ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի խնդիրներին (ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, թ. 24):*

տապալմանը և ՀՀ տարածքի օրինական ու անբաժանելի մասը կազմող Զանգիբասարի, Կարսի և Արդահանի մարզերի, Նախիջևանի անօրինական բռնակցմանը Ադրբեջանին[13]: 1920 թ. հունիսի 3-ին ՀՀ զինվորական դատարանում լսվեց Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության նախկին աշխատակիցների դատը, որոնք մեղադրվում էին տարբեր քրեական-քաղաքական հանցանքների, նաև զանգիբասարյան խռովարարներին աջակցելու և այնտեղ անկարգություններ հրահրելու մեջ, որը կատարվել էր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական հավատարմատար Թեմուր Բեկ Մակինսկու անմիջական հանձնարարությամբ:

Հենց հայկական հետախուզական ծառայության ջանքերով է գործնականում հաջողվել կանխել Ադրբեջանի ագրեսիան Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920 թ. ապրիլը տեղի ունեցած համառ մարտերում[14], որի շնորհիվ նաև հայկական զինուժը ***Գարեգին Նժդեհի*** *գլխավորությամբ կարևոր ու վճռորոշ հաղթանակ տարավ և դրանով իսկ ապահովեց ՀՀ տարածքային անձեռնմխելիությունը: Տ.Դեվոյանցի վկայությամբ՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ խիզախող հայոց զինուժին հաջողվել է ջարդել և վտարել Ադրբեջանի ագրեսոր բանակը Զանգեզուրից.* ***«Հայաստանի հետախուզական բաժանմունքը 200,000 ռուբլիով կաշառեց Նժդեհի դէմ գտնուող Ազրբէյ-ջանի բանակի սպայակոյտի պետին, որը դասաւորեց իր զօրքերը, թնդանօթները եւ գնդացիրները մեր ուզած ձեւով եւ, երբ կռիւը սկսուեց, Նժդեհի ուժերը ջախջախեցին Ազրբէյջանեան շատ աւելի ուժեղ բանակը, գրաւեցին կամ ոչնչացրին թշնամու ուժեղ հրետանին եւ գնդացիրները: Ազրբէյջանի այդ շրջանի զօրքերի սպայակոյտի պետը ազգութեամբ վրացի էր:***

Դրանից յետոյ էր, որ Գարեգին Նժդեհը դարձաւ սպարապետ...»[15]:

Այն փաստում է հայ հետախույզների արգասաբեր գործունեության մի հիրավի շատ հետաքրքիր դրվագի մասին, որ հայկական հետախուզության գործունեությունն ամենևին էլ դժգույն չի եղել, ինչպես այդ մասին ***«փորձում են վկայել»*** *որոշ ականատես և ժամանակակից հեղինակներ: 1920 թ. հունվարի 17-ին (№ 33) Թիֆլիսից Հ. Քիշմիշյանը ՀՀ զինվորական նախարարին ուղղված զեկուցագրում տեղե-*

---

[13] *ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 427, մաս 2 -րդ, թթ. 284, 288, 290, գ. 461, թթ. 24 - 27, 28 - 31, 40:*

[14] *1919 թ. վերջին ադրբեջանական 2 զորաբանակ՝ գեներալներ* ***Ալի աղա Շիխլինսկու և Սամեդ բեկ Մեհմանդարովի*** *հրամանատարությամբ, ներխուժեցին Զանգեզուր: Գ. Նժդեհը Գորիսի տակ կազմակերպեց հակագրոհ, թշնամին խուճապահար փախուստի դիմեց դեպի Ավդալար (այժմ՝ Լաչին): 1920 թ. ապրիլի վերջերին Նժդեհը ոչ միայն հետ մղեց թշնամու բոլոր գրոհները, այլև Դրոյի հետ անցավ Արցախ և օգնեց հերոսական արցախահայությանը:*

[15] **Դէւոյեանց Տ.**, *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1944, N 6 (245), նոյ.- դեկտ., էջ 75):*

կացնում էր, որ լիովին վստահության արժանի անձ Բոգդան Դավիդովիչ Ավան-Յուզբաշի Խան Սագնախսկին, իր «հանձնարարությամբ» համաձայնության գալով Զանգեզուրում գործելու «իրավունք» ստացած ադրբեջանական զորքերի ջոկատի շտաբի պետ փոխգնդապետ իշխան Էրիստովի հետ, վերջինից խոստում է ստացել 200-300 հազար ռուբլու դիմաց իրենց տրամադրել ադրբեջանական բանակի գաղտնագիրը, ողջ գաղտնի գրագրությունը, ադրբեջանական զորքերի տեղաբաշխումը և Զանգեզուրի վրա ենթադրվող հարձակման պլանը: Գեներալ Քիշմիշյանը անհրաժեշտ էր համարում անհապաղ Թիֆլիս գործուղել կապիտան Վ. Գ. Մուրադյանին դրամի հետ միասին, որպեսզի վերջինս անմիջական հարաբերության մեջ մտնի փոխգնդապետ Էրիստովի հետ: Քիշմիշյանը հայտնում էր, որ անհրաժեշտ է զորքերի շտաբի պետին տեղյակ պահել այն հարցերի մասին, որոնք տրվելու են փոխգնդապետ Էրիստովին՝ 1) զորքերի թվաքանակի, 2) դրանց խմբավորումների, 3)ռազմական գործողությունների ուղղությունների, 4) օժանդակ օպերացիաների մասին: Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ բանավոր զեկույցի համար այդ նպատակով ինքը Երևան է գործուղել պորուչիկ Եղիազարովին[16]: Հայ հետախույզները ձեռք բերեցին կարևորագույն տեղեկատվություն, որ նպաստեց Զանգեզուրում Գ. Նժդեհի գլխավորած զորամասերի՝ Ադրբեջանի դեմ տարած վճռորոշ հաղթանակին: Այդ մասին Տ. Դեվոյանցն ուղղակի շեշտում է հետևյալը. «Հայաստանի կառավարութիւնը կարողացաւ կաշառել Ատերբէյճանի զօրքերի սպայակոյտի պետին, որ մի վրացի գնդապետ էր: Վերջինս ոչ միայն տուեց մեզ Ատերբէյճանի զօրքերի դասաւորութիւնը, այլեւ դասաւորեց թաթարական զօրամասերը այնպիսի ձեւով, որ մեր բանակը շատ հեշտութեամբ ջարդեց նրանց եւ գրաւեց նրանց թնդանօթները, գնդացիրները եւ բաւական ռազմամթերք»[17]:

Հայկական հետախուզական ծառայության պատմության ուշագրավ էջերից է 1919 թ. գարնանը կապիտան Տ. Դեվոյանցի և նրա կազմակերպած խմբի ծավալած գործունեությունը Կ. Պոլսում[18], որտեղից Հայաստան ուղարկվեց կարևոր տեղեկատվություն քեմալական ուժերի ձեռնարկումների, դաշնակիցների դիրքորոշման և այլ հարցերի մասին. «Լաւ էր, որ Պոլսից մեկնելուս միջոցին այնտեղ թողեցի մի կորիզ, որ խոստացաւ պարբերաբար, առանց վարձատրութեան, Հայաստանի սիրոյն համար, ուղարկել ինձ կարեւոր հետախուզական լուրեր, առընչութիւն ունեցող Հայաստանի հետ»[19]: 1919 թ. դեկտեմբերին Տ. Դեվոյանցը ՀՀ զինվորական նախարա-

---

[16] *ՀԱԱ, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 184, թ. 3-4:*

[17] **Դէւոյեանց Տ.**, *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1945, N 4 (249), յուլիս-օգոստոս, էջ 83):*

[18] *ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, թ. 62:*

[19] **Դէւոյեանց Տ.**, *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1945, N 1 (246), էջ 85):*

ության ղեկավարության պահանջագրով հետ է կանչվում Կ. Պոլսից, ուր նախատեսված էր մնալ մինչև 1920 թ. մայիսը: Գեներալ Ղորղանյանին ուղարկված Դեվոյանցի 1919 թ. նոյեմբերի 11-ի զեկուցագրից պարզվում է, որ Կ. Պոլիս ժամանած պորուչիկ Խան-Կոտուրսկին հատնում է Դեվոյանցին, որ որոշել են լուծարել հետախուզական ծառայությունը Թուրքիայում՝ բավարարվելով միայն «դիվանագիտական հետախուզությամբ»[20]:

Կ. Պոլսում Տ. Դեվոյանցի թողած հետախուզական փոքրիկ խմբից Հայաստան էր ուղարկվում կարևոր տեղեկատվություն քեմալական ուժերի ձեռնարկումների և Դաշնակիցների մասին. «Երեւանում ստացայ այդ մարմնից (հետախուզական խմբից) առաջին ծրարը, վաւերական հեռագիրների պատճէններով, ծածկագիր՝ Էրզրումից Պոլիս Կարաբէքիր Քեազիմ փաշայի ուղարկուած պատերազմական նախարարին: Ամփոփեցի եւ տպագրելով N 14, սեպտեմբերին խիստ գաղտնի ուղարկեցի իմ նախարարին, զօրամասերի պետերին եւ մի օրինակ էլ տուի կապ. Մ.-ին՝ մեր սպայակոյտի «պետին»: Այդ հեռագիրները ցոյց էին տալիս, թէ ի՞նչ դասաւորութեամբ (N N գնդերի եւ դիվիզիաների), ի՞նչ ուղղութեամբ եւ ե՞րբ թրքական ուժերը պէտի յարձակուէն Հայաստանի վրայ ու գրաւեն Կարսը, Օլթին, Սարիղամիշը, Արդահանը, Իգդիրը եւ այլն: Այդ ամփոփումն ունեմ այսօր ձեռքիս տակ:

Մաթեմատիկական ճշդութեամբ հետագային գործադրուեց այդ հեռագիրների բովանդակութիւնը Հայաստանի նկատմամբ: Բայց ինչպէ՞ս ընդունուեց լուրը մեր պաշտօնական իշխանութեան կողմից: Լսեցի, որ մեր քաջ սպայակոյտի պետը անուանել էր ինձ խելագար, իսկ նախարարներից մեկը ասել էր. ***«Այդ Դեւոյեանցի ցնդաբանութիւններն են»***[21]*: 1919 թ. հոկտեմբերի 6-ին գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված զեկուցագրում Տ. Դեվոյանցը Երևան ուղարկած հենց այդ փաստաթղթի մասին է ասում՝ ընդգծելով, որ կից ուղարկում է զինվորական մինիստրությունից [Թուրքիա] ձեռք բերված զորքերի տեղաշարժերի մասին մի շարք հեռագրեր, որոնք ծածկագրված վիճակում փոխանակվել են թուրքական 15-րդ կորպուսի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշայի և ռազմական նախարարի միջև*[22]*: Տ. Դեվոյանցի կողմից Կ. Պոլսից ուղարկված հեռագրերի, զեկուցագրերի և ամփոփագրերի նշանակության մասին է նշում նաև* ***Ռ. Հովհաննիսյանը***[23]*: 1920 թ. թուրքհայկական պատերազմը փաստեց, որ դրանք ամենևին էլ* ***«ցնդաբանություններ»***

---

[20] *Նույն տեղում:*

[21] **Դեւոյեանց Տ.**, *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1945, N 2 (247), մարտ-ապրիլ, էջ 85):*

[22] *Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3:*

[23] **Hovannisian R. G.** *The Republic of Armenia, vol. II, From Versailles to London, 1919 - 1920, Berkeley, Los Angeles, London, University of California Press, 1982, p. 68, 177-178, 489:*

չէին»: Դրանք վկայում են, թե ինչ անտարբերություն և թափթփվածություն էր իշխում զինվորական, հատկապես բարձրագույն սպայակույտի և կուսակցական-քաղաքական ղեկավար շրջաններում: Հասկանալի էր, որ հայկական բանակի անհաջողությունների և սայթաքումների անմիջական մեղավորները ամենին էլ միայն հետախույզները չէին, թեկուզև նրանք էլ այդ ամենից անմասն չէին: Ակնհայտ է, որ առաջին հերթին մեղավոր էին կաբինետային գեներալները և ռազմաքաղաքական իրավիճակին ***«լավագիտակ»*** *կուսակցական-քաղաքական առաջնորդները, որոնք չափազանց մեծ վստահություն ունեին Անտանտի եղբայրակիցների կողմից ակնկալվող ռազմաքաղաքական աջակցության նկատմամբ:*

Հետաքրքիր է, որ Կ. Պոլսից մեկնելուց առաջ Դաշնակից պե-տություններից մեկից դիմում են Տ. Դեվոյանցին իրենց մոտ ծառայության անցնելու առաջարկով, որին հայ հետախույզը չի համաձայնվում՝ հավատարիմ մնալով հանձնարարված գործին ու հայրենիքի գաղափարին. «Պոլսից մեկնելուց առաջ մի Դաշնակից պետութեան պատասխանատու ներկայացուցիչը ինձ փորձեց համոզել, որ հրաժարուեմ իմ Հայաստանի պաշտօնից՝ ամբողջ Արեւելքի հետախուզական գործը կազմակերպելու համար իրենց հաշուին: Առաջարկում էր 10,000 տոլար ամսական բիւձէ: Ես կտրուկ կերպով մերժեցի: Երեւանը, իմ հայրենիքս, ինձ կանչում էր, պէտք է մեկնէի»[24]: Դեպի Երևան ուղևորության ժամանակ նրան օգտակար է լինում Բաթումի ֆրանսիական հյուպատոսը և Հայաստանի Հանրապետությունում ֆրանսիական ռազմական ներկայացուցչության աշխատակից կապիտան Անտոն Պուադեբարը, որը նաև հետախուզական բաժանմունքի վարիչ էր:

Ակներև է միաժամանակ, որ հայկական հատուկ ծառայություն-ների թուլությունն արտահայտվեց նրանում, որ մասնավորապես 1920 թ. աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, համեմատաբար աղոտ պատկերացումներ ունեին թուրքական բանակի թե՛ քանակի, թե՛ պլանների վերաբերյալ, որ չկարողացան ավելի արդյունավետորեն հակազդել Ք. Կարաբեքիրի բանակի հետախուզական մարմինների գործունեությանը: Տարբեր հեղինակներ հակասական տվյալներ են բերում այդ ժամանակաշրջանի թուրքական բանակի իրական կազմի և քանակի մասին: «Տաճիկները լուռ ու անաղմուկ պատրաստվում էին Հայաստանի վրա արշավելու: Հայկական կառավարությունը շատ ուշ իմացավ նրանց այդ դիտավորության մասին», - գրում է ժամանակակիցը՝ ***Յ. Իրազեկը***[25]*:* ***Կ. Սասունին****, նս անդրադառնալով այդ հարցին, գրում է, որ այն ժամանակ, երբ թուրքական բանակը Հայաստանի սահմանների վրա, Նախիջևանի և Կարսի նահանգներում նախա-*

---

[24] **Դեւոյեանց Տ.,** *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1945, N 2 (247), մարտ-ապրիլ, էջ 83):*

[25] **Իրազեկ Յ.,** *Մօտիկ անցեալից: Պատմական դէպքեր, ապրումներ, 1917-1922, Պէյրութ, 1956, էջ 67:*

*պատրաստություններ էր տեսնում և ուներ ճյուղավորված լրտեսական ցանց, որի միջոցով ստանում էր անհրաժեշտ և տեղին տեղեկատվություն, ապա Հայկական բանակի թիկունքն այդ ժամանակ անապահով վիճակի մեջ էր, և մանավանդ գրեթե «անգոյ էր հայկական հետախուզությունը թուրքական գործում», որ «զինուորական հետախուզությունը շատ ողբալի վիճակ մը՛ ունէր: Ոչ մէկ հայ կար Արեւելեան նահանգներու մէջ, որպէս զի կողմնակի ճանապարհով հայ զինուորականութիւնը հաւաստի լուրեր ստանար[26]«: Կ. Սասունին ավելացնում է. «Մենք զուրկ կը մնայինք շարք մը ճշգրիտ տեղեկութիւններէ, որոնց չգոյութեան պատճառով բաւական վնասներ կրեցինք...[27], մինչդեռ թրքական Արեւելեան բանակի հրամանատարութիւնը, օրը օրին, ճշգրիտ տեղեկութիւններ կը ստանար մեր զինուորական եւ քաղաքական վիճակի մասին: Անոնց լրտեսական ցանցը շատ լաւ կազմակերպուած էր, օժանդակ ունենալով Հայաստանի ամէն կողմ ցրուած թուրք-թաթար ազգաբնակչութիւնը»[28]: Այս տեսակետին է նաև **Վ. Արծրունին**, գտնելով, որ հայկական հետախուզությունը մասնագիտորեն թույլ էր, և աշխատանքները անբավարար էին. «շնորհիվ մեր հետախուզական բաժնի անփութութեան, հակառակորդի յաջորդ քայլերուն մասին կը տիրէր ընդհանուր անորոշութիւն»: Ընդհանուր առմամբ ճիշտ նկատելով, որ «ներքին գործոց եւ ռազմական նախարարութեանց ու ճակատի հրամանատարութեան պարտականութիւնն էր ի գործ դնել իրենց բոլոր միջոցները՝ թոյլ չտալու, որ մեր երկիրը յանկարծակիի գար»[29], ընդգծելով, որ «թշնամին անիրազեկ չէր Կարսի խուճապին: Հայկական հրամանատարութիւնը գոհ էր իր հետախուզական աշխատանքէն եւ կու՛ գէր հավատացնել, որ ինքը գիտէր տաճիկ հրամանատարութեան ռազմագիտական յաջորդ խաղը», միաժամանակ ընդգծելով, որ իշխող ալան-թալանի, իշխանության՝ մահմեդական ընդվզումները ճնշելու անկարողունակության **«պայմաններուն մէջ պատմութիւնն արձանագրողը մեծապէս անզօր կ՛զգայ մեղադրել հետախուզական բաժանմունքները»**[30]: Իհարկե, հենվելով **Հայ Գնդունու (Համբարձում Թօփճեան)** տվյալների վրա, արդարացիորեն բնականոն երևույթ չի կարելի համարել և այն հանգամանքը, որ 1920 թ. պատերազմի անմիջական նախօրյակին «Արդահանի և Կարսի բնիկ թուրք երևելիներէն ոմանք Երեւանի կառաւարութեան ապշեցուցիչ աչառութեամբ ու ծանծաղամտութեամբ, պաշտօնական պատերազմը չսկսած»՝ նույնիսկ հաճախակի այցելություններ են*

---

[26] **Սասունի Կ.**, *Հայ-թուրքական պատերազմը (Հայրենիք (Բոստոն), 1926, N 5 (41), էջ 75):*
[27] *Նույն տեղում:*
[28] **Սասունի Կ.,** *Հայ-թուրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 21, 71:*
[29] **Արծրունի Վ.,** *Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Ե., 2002, էջ 71, 165:*
[30] *Նույն տեղում, էջ 32, 72, 73, 159:*

կատարել սահմանային շրջանի բնակավայրերը, այցելել են «սահմանագլուխը պաշտպանելու կոչված մեր գնդերը», այսպիսով իրազեկ լինելով «մեր բոլոր պետական-զինվորական բնույթ կրող» խնդիրներին[31], այսինքն՝ ըստ էության առանց որևիցե դժվարության հայթայթել են անհրաժեշտ տեղեկատվություն սահմանային շրջանի անցուդարձի մասին: Այդուհանդերձ, չի կարելի լիովին համերաշխել ***Հայ Գնդունու*** *այն պնդումներին, թե, իբր, «Երեւանը ձեռք չէր առած եւ չէր առնէր ոչ մէկ ազգու զենք՝ թափանցելու թշնամի Թուրքիայի ծրագիրներուն եւ հաշիւներուն», որ «հետախուզութեան, թշնամին ուսումնասիրելու, անոր մտածումներն ու ծրագիրները հրապարակ հանելու, առած քայլերը կշռելու եւ ըստ այնմ գործելու տարրական գիտելիքը պարզապէս մոռցուած, անտեսուած էին հայկ. բանակին իրաւասու եւ պատասխանատու պետերէն»[32], դա նշանակում էր պարզապես չտեսնել նույնիսկ այն, ինչ առկա էր:* ***Հ. Գնդունու*** *տեսակետն են պաշտպանում նաև պատմաբաններ* ***Է. Զոհրաբյանը, Մ. Կարապետյանը****, որոնք նշում են հետախուզական ծառայության թուլության կամ նույնիսկ անգործության մասին[33]: Կ. Սարդարյանը ևս, չբերելով կոնկրետ փաստեր, գրում է. «Քանի որ չկար կանոնավոր հետախուզական ծառայություն, ուստի հայկական զորքերի հրամանատարությունը տեղեկություն չուներ, թե ինչ է կատարվում սահմանից այն կողմ»[34]:*

Արխիվային փաստաթղթերն ակնհայտորեն վկայում են, որ ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն աշխատել է հայթայթել արժեքավոր տեղեկատվություն թշնամական ուժերի կողմից նախապատրաստվող ու ծրագրավորվող սադրանքների մասին, այլև որոշակի քայլեր է ձեռնարկել՝ հակազդելու թշնամական գործողություններին՝ մերկացրել և կանխել է հակառակորդի լրտեսների ծավալած գործունեությունը ՀՀ տարածքում: Այդ է վկայակոչում ***Ա. Գյուլխանդանյանը****. «Միաժամանակ Հայաստանի զինուորական հետախուզական զեկոյցները ցոյց էին տալիս, որ թուրք կանոնաւոր զօրամասեր են շարժւում Օլթիի, Սարըղամիշի եւ Ալաշկերտի ուղղութեամբ եւ Արդահան Օլթիի շրջաններում կազմակերպել էին գնդակացիներով զինուած քրտական հրոսակախմբեր: Նոյնը կատարւում էր նաեւ Կաղ-*

---

[31] *Մարտկոց (Փարիզ), 3 նոյեմբերի, 1932, N 18:*

[32] *Նույն տեղում:*

[33] **Զոհրաբյան Է.**, *1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 85-86, 167-171, 174-176, 348, նույնի՝ Հայաստանի Հանրապետության ադրբեջանաբնակ ապստամբ շրջանների հնազանդեցումը 1920 թ. հունիս-հուլիսին (Բանբեր Երևանի Համալսարանի, 2006, N 1, էջ 11-12, 16-17):* **Կարապետյան Մ.**, *Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Ե., 1996, էջ 98-99:*

[34] **Սարդարյան Կ.**, *Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (ինչպե՞ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), Ե., 2007, էջ 110:*

զուան-Սարիղամիշ տարածության վրայ»[35]*: Հետախուզական ծառայության հայթայթած տեղեկատվության կարևորությունը հաստատում է նաև* ***Ս. Վրացյանը****. «Հունիս ամսից սկսած, հայկական հետազոտությունը (հետախուզությունը. - Վ. Վ.) նկատում էր թուրքերի կողմից զինվորական շտապ պատրաստություններ Հայաստանի ուղղությամբ: Թուրքահայաստան ուղարկված գործակալները, կարդում ենք Հայաստանի Գլխավոր սպայակույտի հունիսի 17 գաղտնի զեկուցման մեջ, վկայում են թուրք կանոնավոր զորամասերի ներկայությունը Օլթիի և Սարիղամիշի ուղղությամբ և Ալաշկերտի շրջանում: Կատարելապես ստույգ հաստատված է, որ թուրքական 12-րդ դիվիզիան գտնվում է Խորասան-Ջիվինում՝ կենտրոն ունենալով Խորասանում: Քարոզչությունը Թուրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է: Այդ նպատակով մեծ թվով թուրք գործակալներ են ուղարկված Հայաստանի ներսերը, մահմեդական գյուղերը, և ամեն տեղ հայտնաբերվում են մեր վարչության և հակահետախուզության կողմից: Մասնավորապես զորավոր է թուրք գործակալների ազդեցությունը Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիրներով զինված քրդական հրոսակախմբեր: Նույն պատրաստությունը կատարվում է և՛ Սարիղամիշ-Կաղզվան տարածության վրա, և՛ ավելի հեռուները՝ Բարթողյան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում՝ մինչև Արարատ»*[36]*:*

Ավելին, ***Ռ. Հովհաննիսյանը****, բերելով փաստեր թուրքական նախապատրաստությունների և այն մասին, որ դեռ 1918 թ. Թուրքիայի ռազմական նախարարը արտոնել էր Անդրկովկասում գտնվող բանակային սպաներին ծառայության մտնել Հյուսիսային Կովկասի և Ադրբեջանի հանրապետության զորքերում, իսկ նոյեմբերին թույլատրեց ի դեմս Նուրի փաշայի վերջինիս հետ պայմանագիր կնքել, որով թույլատրվում էր օսմանյան բանակի սպաներին ու զինվորներին հոժարակամ ծառայության մտնել ադրբեջանական բանակում, որոնք հետագայում գործուն դեր խաղացին հայ-ադրբեջանական սահմանային կռիվներում*[37]*, ինչպես նաև մասնակցել Երևանի նահանգում հրահրված խռովություններին, հաստատում է, որ հայկական հետախուզությունը տեղեկացված էր այդ մասին. «Այն ժամանակ, երբ Կարաբեքիրը բազմաթիվ չափազանցված լուրեր էր տարածում, Հայկական բանակի հետախուզության սպաները և գլխավոր սպայակույտը հաղորդում էին Ալաշկերտում, Օլթիում և Սարիղամիշում թուրքական կանոնավոր զորքերի առկայության մասին (1919 թ. կեսերի տվյալներով - Վ. Վ.): Կարսի մարզում նկատվել էին*

---

[35] **Գիլխանդանեան Ա.,** *Անդրկովկասի հանրապետութիւնները (Հայրենիք (Բոստոն), 1967, N 4, ապրիլ, էջ 77):*

[36] **Վրացյան Ս.,** *Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 314:*

[37] **Հովհաննիսյան Ռ.,** *Հայաստանի Հանրապետություն, հ. I, 1018-1919, Ե., 2005, էջ 61-62:*

նաև թուրքական գործակալներ, որոնք մահմեդական գյուղերին կոչ էին անում մարտահրավեր նետել Երևանի կառավարությանը և հայտնում էին, որ Կարմիր բանակը մասնակցում է հայերի դեմ ուղղված արշավանքին»[38]: Այնուհետև այդ կապակցությամբ Ռ. Հովհաննիսյանը նկատում է, որ հենց դրանում էր «իրավացի» Ք. Կարաբեքիրը, գտնելով, որ հայերը երբեք չէին կարող այնքան պարենամթերք ու պաշարներ ձեռք գցել, որ պահեին 30.000-անոց զորք, և որ առավել ևս Անդրանիկի համար (Ք. Կարաբեքիրը վկայակոչում էր Անդրանիկին, քանզի վերջինս մահմեդականների ահուսարսափն էր) անհնարին կլինի նույնիսկ 10.000 «մուրացկան հայեր» հավաքել», որ հենց այդ պատճառով էլ «Հայաստանը չի կարողանա իրականացնել արևելյան վիլայեթների միացումը առանց Դաշնակից տերությունների գործուն մասնակցության, որի համար հղված անվերջ խնդրանքները մնում էին անպատասխան»[39]: Հենց այդ հանգամանքից «տագնապած» Ա.Ահարոնյանը ահազանգում է Փարիզի Հաշտության վեհաժողովին, սակայն անարդյունք և անարձագանք. դա որևէ կերպ ազդեցություն չունեցավ Խորհրդային Ռուսաստանի և ազգայնական Թուրքիայի միջև հաստատվելիք վերահաս կապերի վրա [40]:

Դեռ 1920 թ. մայիսին Տ. Դեվոյանցը եկել էր այն եզրակացության, որ նկատի ունենալով ստեղծված պայմանները՝ ինքը անհավանական չի համարում, որ թուրքերը կսկսեն ռազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության դեմ՝ խորտակելու հա-մար հայկական պետականությունը:[41] Դեվոյանցը նույնիսկ պնդում է, որ «Հայաստանի պատերազմական նախարարութիւնը եւ Փարիզի Հայաստանի Պատուիրակութիւնը դեռ 1920 թ. ապրիլին գիտէին տաճիկ-մեծամասնական յարձակումների մասին»[42], այնուհետև խիստ բազմանշանակ ավելացնում է հետևյալը. «Հայաստանի հե-տախուզական բաժանմունքի ստացած գաղտնի զեկուցումների մէջ շատ անգամներ շեշտւում էր, որ Տաճկաստանի ազգային ուժերը Մուստաֆա Քէմալ փաշայի ղեկավարութեամբ շտապ վերակազմւում, կազմակերպւում են: Եւ, հակառակ Դաշնակիցների կտրուկ հրահանգներին, երիտասարդ թուրքերը հասան իրենց նպատակին, այն է՝ կազմեցին Ֆերիզ Ռիզա փաշայի նոր դահլիճը, բացառաբար իրենց կուսակիցներից, եւ այդպիսով «Միլլի Թաշկիլաթի» դրութիւնը դարձաւ օրինական»[43]: Սովետական Ռուսաստանի բռնած դիրքորոշման վերաբերյալ Տ. Դեվոյանցը գալիս է անառարկելի եզրակացության.

---

[38] *Նույն տեղում, էջ 490:*
[39] *Նույն տեղում, էջ 469:*
[40] *Նույն տեղում, էջ 457:*
[41] *Ռազմիկ, Ա. տարի, 1920, N 1, 15 մայիսի, Ե., Զորական շաբաթաթերթ, էջ 9:*
[42] **Դէւոյեանց Տ.,** *Կեանքիս դրուագներից (Հայրենիք (Բոստոն), 1947, N 2 (259), մարտ-ապրիլ, էջ 107):*
[43] *Նույն տեղում, 1946, N 2 (253), էջ 103:*

«Եվրոպական պետություններից ամենից շատ Անգլիան էր օգնում ռուսական ճերմակ բանակներին, ուստի սովետները որոշ շարժում առաջ բերին Անգլիոյ դէմ մահմեդական երկրների մէջ եւ հովանաւորեցին Էնվեր եւ Նուրի փաշաներին ու նրանց նմաններին: Իհարկե, Սովետական Ռուսաստանի այս քայլը վնասում էր Հայաստանին, բայց նկատի ունեցէք, որ դիւանագիտութիւնը գութ չունի»[44]:

Դատելով հետախուզական բաժանմունքի 1920 թ. սեպտեմբերի 25-ի ամփոփագրից՝ մինչև թուրք-հայկական պատերազմի սկսվելը, օգոստոսի 16-ին, Ք. Կարաբեքիրը հայտարարություն է արել այն մասին, որ դաշնակիցները՝ բոլշևիկները, իրենց շարունակ մատակարարել են զենք ու զինամթերք, որի շնորհիվ դժվար օրերը մնացել են հետևում[45]*: Դա հրաշալի են հասկացել թուրք քաղաքական գործիչները՝ իրենց մարտավարությունը կառուցելով ՀՀ՝ Անտանտի դաշնակիցների անվճռականության և բոլշևիկների հետ փաստացի բարեկամության վրա, որից ոգևորվելով՝ թուրքերը լավագույն դեպքում դեմ չէին Հայաստանի կազմավորմանը Անդրկովկասի հաշվին, իսկ Թուրքահայաստանի ճակատագիրը պետք է որոշվեր միայն հենվելով* ***Մ. Քեմալի հռչակած այսպես կոչված «ազգային սահմանների» և «ազգային սուվերենիտետի» գաղափարների վրա***[46]***, որպես հիմնական նպատակադրում ունենալով «բոլոր ուժերով, մինչև արյան վերջին կաթիլը համատեղ պաշտպանել հայրենիքը ցանկացած ներխուժումից և հատկապես գաղտնի մտադրությունից՝ նրա տարածքում ստեղծել հունական կամ հայկական պետություն», օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ դիմելով և՛ զենքի, և՛ բարոյական կարգի զանազան միջոցների օգնությանը: Եվ դեռ ավելին, Մ. Քեմալը գտնում էր, որ անգամ դաշնակիցների միջամտության պարագայում նրանք ևս կդասվեն իրենց հակառակորդների շարքում, որոնք կփորձեն ոտնձգություն կատարել իրենց իրավունքների նկատմամբ***[47]*: Դեռ 1919 թ. հոկտեմբերի 13-ին** ***Վելիդ բեյին*** *հասցեագրված հեռագրում* ***Քեմալը*** *հատուկ ընդգծում է,* ***որ ազգը ոչ մի դեպքում չի կարող համաձայնվել, որ իրենց երկրի սահմանների մեջ գտնվող թեկուզ մեկ թիզ հող միանա Հայաստանին***[48]*:*

Հետևաբար, հարկ է արձանագրել, որ ՀՀ կուսակցական-քաղաքական ղեկավար շրջաններում լուրջ չէր ընդունվում քեմալաթուրքական-բոլշևիկյան համագործակցության հնարավոր և գործնական հեռանկարը, որովհետև անսթափ հաշվարկներ

---

[44] *Նույն տեղում, 1945, N 2 (247), մարտ-ապրիլ, էջ 79, 1945, N 5 (250), սեպտ.- հոկտ., էջ 100:*

[45] *ՀԱԱ, Ֆ.Պ, 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 351:*

[46] **Ататюрк К.** *Избранные речи и выступления, М., 1966, с. 47- 48, 76.*

[47] **Кемаль М.** *Путь новой Турции, т. I, М., 1929, с. 414.*

[48] *Նույն տեղում, հ.* ***II****, Մ., 1932, էջ 10-11, 208:*

կային, որ հաղթանակած Անտանտի դաշինքը մոտ ապագայում վճռականորեն ու անվերապահորեն կայացնելու էր «հիվանդ մարդու»՝ Թուրքիայի դատավճիռը, որի հետևանքով էլ իրականացվելու էին Սևրի ներշնչած հույսերը և խոստումները: Միաժամանակ, կարծում ենք, չի կարելի կտրականապես պնդել, թե իբր քեմալականների համար ծանր 1919 թ. ՀՀ «ձևական» համարվող կառավարությունը, հույսը դրած Փարիզի վեհաժողովի վրա, փորձ անգամ չարեց լսելու (թուրքերին- Վ. Վ.), թե նրանք ինչ են առաջարկում, և համոզված հաստատել, թե հենց «Հայաստանի նման դիրքորոշումը զգալի, եթե չասենք վճռորոշ դեր խաղաց քեմալա-բոլշևիկյան դաշինքի ստեղծման գործում»[49]: Կարծում ենք, որ դա չէր համապատասխանում տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրողությունների խորքային, ոչ թվացյալ զարգացումներին:

Որ Հայաստանի առաջին հանրապետության հետախուզական ծառայությունները ընձեռված հնարավորությունների և առկա կադրուժի շրջանակներում ձգտել են աշխատել առավելագույն արդյունավետությամբ, փաստ է: Ֆինանսատնտեսական դժվարությունները, կադրային սովը, օպերատիվ աշխատանքի փորձի գրեթե բացակայությունը որոշակիորեն բարդացրին լարված ռազմաքաղաքական իրավիճակում գործող հայկական հետախուզության ու հակահետախուզության առավել լիարժեք կայացումը, գործունեությունը: Այն կարող էր ավելի արգասաբեր լիներ հայթայթված տեղեկատվության և հակառակորդի հակահայկական գործողությունների արդյունավետ կանխարգելման տեսանկյունից, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայ հետախույզների գործունեությունը 1918-1920 թթ. ընթացավ աշխարհաքաղաքական առումով այնպիսի բարդ պայմաններում, որում քեմալա-բոլշևիկյան մերձեցման իրավիճակում բախվեցին բոլշևիկյան Ռուսաստանի և Անտանտի դաշնակից երկրների շահերը Անդրկովկասյան տարածաշրջանում և դրա շուրջ:

---

[49] **Սարդարյան Կ.,** *նշվ. աշխ., էջ 40-41:*

ОРГАНИЗАЦИЯ И ДЕЯТЕЛЬНОСТЬ РАЗВЕДСЛУЖБЫ В РА (1918-1920 ГГ.)

ВИРАБЯН В. Г.

Резюме

Армянская разведывательная служба сыграла неоцени-мую роль в победе армянских войск под командованием Г. Нжде в Зангезуре в конце 1919 - начале 1920 гг., что обеспечило территориальную целостность республики.

Являясь составной частью государственной системы безопасности РА, разведывательное и контрразведывательное отделения Главного штаба МО РА внесли достойную лепту в обеспечение национальной безопасности страны (так называемое дело представителя Азербайджана в Ереване Хан-Текинского и т. п.), способствуя восстановлению правопорядка в разных частях Республики Армения путем подавления мятежа, организованного магометанским населением (Беюк-Веди, Зангибасар, Карсская область и т.д.). Особо следует отметить деятельность армянской разведгруппы под руководством Т. Девоянца в самом сердце Турции - в Константинополе.

THE ORGANIZATION AND THE ACTIVITY OF THE INTELLIGENCE SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA (1918-1920)

V. VIRABYAN

Abstract

The present paper addresses the activities of the Armenian intelligence and Counterintelligence services in disclosing and impeding the hostile schemes on Armenian territories, as well as the attempts of forming intelligence groups in such neighboring countries as Azerbaijan, Georgia and Turkey, where from the end of 1919 to the beginning of 1920s Captain Devoyants's group was operating. The paper demonstrates the persistence of the intelligence and counteri - ntelligence services of the Republic of Armenia when facing the enemies' more experienced and strong forces, and obtaining necessary information. For the first time in Armenian history, the activity of Armenian intelligence Service has been disclosed. The author also highlights the role of Intelligence Service from the end of 1919 to the beginning of 1920 in the region of Zangezur, where under the leadership of G. Njdeh a decisive and deserving victory was gained over the Azerbaijani army.

Facts come to prove that being a constituent part of state security system of the Republic of Armenia, the Intelligence Service of the RA the Ministry of Defense General headquarters undertook efforts to regulate some issues in national Security Sphere (the so-called case of Azerbaijani representative Khan-Takinsky in Yerevan), to restore law and order in some parts of the Republic of Armenia through the suppression of rebellious aspirations of Mahometian population (Beyuk-Vedi, Zangibasar, Kars District, etc).